

Ս Ե Կ Ո Ւ

Ա Մ Ա Ա Գ Ի Ռ

Ա Զ Գ Ե Յ Ե , Բ Ե Լ Ո Ւ Յ Ե , Գ Ր Ե Վ Տ Տ Ե Յ
Ե Ւ Ք Ե Վ Ե Յ Ե


Ա Թ Ե Զ , Ի Ւ Տ Ե Ր Ե

Յ Ե Ր Ա Ւ Յ Ե Դ Ո

Ե Տ Պ Ա Ր Ա Ն Ա Տ Ա Ր Ա Ն Ա Տ

1866





Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԵՐԻՎՈՅԻ, ԲԵՆԵՍՈՒՐԻԿԵՆ ԵՒ ԳՐԵՎԻՑԻԿԵՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. ԹԻ 11.

ՀԱՅԱՆ ՄԻԱՄԵԱՅ

1 ՆՈՅԵՄԲՐԻ 1866

ԱԶԳԱՅԻՆ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ԿՈՂՄԵՆ ԽՐԿՈՒԱԾ

ՀՐՁԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ՄԻ

ԱՇԽԱՐՀԱ մէջ ամեն բարիք ունի իւր
ներհակը, ու ամեն բարի սովորութի՝
իւր զեղծումը : Յայտնի է որ զեղծում
մի ոչ իբր չար, այլ իբրեւ բարի եւ
օգտակար, և եթէ կրօնական է այն՝
իբրեւ հոգւոյ շահաւէտ սակաւ տո-
սակաւ սպրդած մտած է ազգին եւ
կամ եկեղեցւոյ մէջ, որոնք ուրիշ
բառիւ՝ աւելորդապաշտութիւն ալ
կը կոչուին : Վեր հայկական բուն եւ
կեղեցին աղաստ է ի սկզբանէ անտի
լուսաւորութեան՝ այս օրինակ զեղ-
ծումներէ . բայց ոչ եւ արտաքոյ եւ
կեղեցւոյ եղած ազգային սովորու-
թեանց մէջ, որ մինչեւ ցայսօր դեռ
շատ տեղուանք կը տեսնուին, մանա-
ւանդ այնպիսի քաղաքներ՝ որոնք քա-

լոփականապէս լուսաւորեալ սահ-
մաններէն հեռու են : Որբազան տեղ-
ուանք ուխտագնացութիւն ընել ոչ
միայն քրիստոնէութեան, այլեւ հին
եկեղեցւոյ ժամանակն ալ կար, որ
կրօնական պարտաւորութի՝ մի սեպ-
ուած էր գէթ կենացը մէջ անգամ
մի ուխտի երթալու այն տեղուանքը :
Վայ բարի սովորութիւնը, թէպէտ
ոմանք ուամկութեան ընծայելու ըլ-
լան եւ անօգուտ հոգւոյ նկատմամբ,
այսու ամենայնիւ խիստ լուսաւոր-
եալ ազգաց մէջ ալ մինչեւ ցարդ կը
տեսնենք որ մեծ ջերմեւանդութիւն
հեռաւոր երկիրներէ կը փութան կը-
րօնական ճամբորդութիւն ընելու,
մանաւանդ յլուսազէմ, որ կեդրոն

է բոլը ու խոռատեղեաց : Եշւ ու խոռաւոր մի այն աստիճանի պատիւ ու մեծարանք կ'ընդունէր իւր հայրեանակիցներէն, որ մինչեւ ի դարձին կը փութացին նահապետական խօստ հին սովորութիւնը ի գործ դնելու՝ անոր սովերը լուալով, և ընծայիւք անոր դիմոցն աճապարելով . այս սովորութիւնները մինչեւ ցարդ անզ անզ կան, մինչեւ մահմետականոց մէջ, որոնք աւելի մօտ են նահապետական ծէսերու : Ասկայն՝ ինչպէս որ ըսինք, բարի սովորութիւն մի զեղծումն կը բռնիլ, եթէ այն զեղծումը անձնական շահու դպչի, բնականապէս սովորութիւնը խափանուելու կը ըսկը ։ անոր կը հետեւի բարեպաշտութեան եւ ջերմեռանդութեան նուազումն, և այս ալ կը ծնանի կրօնի անսուրբերութիւնը ռամիկ ու անուսումն մտքերու մէջ : Այս զեղծումները մեր ազգին մէջն ու կան, որոնք կանդակիս մէջ բացարուած են փոքր ի շատէ : Եշւ ինչպէս որ մեր բարեյիշատակ նախորդաց ժամանակ՝ նոյնպէս եւ երկու տարիէն ի վեր է, բարեպաշտ ու խոտաւորաց մէջէն շատերը խնդրած են (1) Աթոռէօյիշեալ զեղծումներուն եւ անօդուտ սովորութեանց առաջն առնելու համար պահերական մի յուղարկելառ եկեղեցիս Հոյոց, եւ յորդորել զմողովուրդը որ այնպիսի անօդուտ սովորութիւնները՝ որ մեծամեծ ծախքերու գուռ են, մէկդի թողլով, ինչ որ հոգեւոր է եւ հոգւոյ շահաւոր՝ անոր միայն հետեւին :

Այս զեղծումներէն առաջ եկած մասնաւոր շահերու վեասները մէկդի թողլով, միայն սուրբ Աթոռոյս անոց պատճառաւ հասարակութեան տարապարտ զրոյներու ու անհիմն կործիքներու ենթակայ ըլլալը խօ-

սինք, Յոռաբանական առածին, այսինքն երկու անգամ երկու չորս կ'ընէ ըստածին պէս, իբր բնական ձըշմարտութիւն ըմբռնած են հասարարութեան մէջն շատերը, (ասոնցմէդուրա են ու խոփի եկողները՝ որոնք անձնական փորձով գիտեն սիսալ ըլլալը), թէ ու խոտաւոր մի հետը բերած ստակի գումարին կէսը սուրբ Աթոռոյն մէջ կը թողու : Այս կարծեաց յենալ՝ առանց թուաբանութեան գյուտարբին ու կնճռալից հաշիւներու գիմելու, այլ միայն համեմատական թուարկութեամբ, այն պիսի գումարը մի գոյոցած կը զըտնեն իրենց տչքին զիմացը, որոնք ապչելով ու վեր ու վար ցատկելով ու բախութեամբ մի կըսկսին ձալ, եւ անկէ ազգային մեծամեծ օգուտներ երազել, եւ ազգին մէջ հօկայոքոյը յառաջադիմութեան ասպարէղ բանալու միջոյներ երեւակոյել : Կարծես թէ մարդարէին գուշակութիւնը մեր ազգին եւ այս կտորին համարէ . “Օեւք ձեր երազովք երազեսցին, կ'ըսէ, եւ երիտասարդք ձեր աեւիլ տեսցեն” (1). Ո՞ի թէ այս հաշիւներէն խաբուելով ըստած ու գրած շէ երիտասարդ խմբագրին մէկը, որ սուրբ Աթոռոյս այս նեղ ժամանակիս մէջ ըստ ձեռնհասութեան իւրում Հայաստանի շատ քաղաքաց գոլրոյներուն գրքեր խրկելով քիչ սեպելով, տղայաբար կ'առաջարկէ որ վարժապետներ խրկուի սուրբ Աթոռոյս կողմէն եւ ամեն անզ գործոցներ հաստատէ . չմոտածէր նա որ այս տղայամիտ ու գահավիժեալ առաջորկութեամբս՝ մեծազօր աէրութեան մի շերտացած ըրած դորձքը, կրօնական պարզ միաբանութենէ կը պահանջէ,

որով և հասարակութեան ծիծաղը կը շարժէ : Տաճկական առածին տեղնէ . ներքնէ զեւ կ'այլէ : Երբնը ը-րիւը : Այսչափով առ այժմ բաւականաւուլը, թողունք հասարակութեան որ ուշի ուշով կորդան շրջաբերական կոնդակին օրինակը :

Ի սուրբ եւ փառաւորեալ, Վաստածագարդ եւ մեծապայծառ, շնորհածաւալ և Քրիստոսակօխ որբ ոյ քաղաքէս Արուսաղէմէ, եւ յամենայն փրկագործ տնօրինական սուրբ Տեղեացս Քրիստոսի Վաստուծոյ մերոյ, եւայլն, եւայլն : Աւ ի սոցին սպասաւոր և վերատեսուչ ի Տէր ԵՍԱՅԻ Արքեպիսկոպոսէ և Պատրիարքէ սրբոց մայրաբաղաքիս Արուսաղէմի : Յորոց ժամանեալ հասցէ դիր օրհնութեան և նամակ պահպանութեան ի վերայ հոգեւոր Քրիստոսասէր ջերմեռանդ ժողովրդոց մերոց բնակելոց ընդ ամենայն կողմանու, եւայլն :

Աւ ընդ աստուածապարգեւ օրհնութեանս յայտ առնեմք մեր հոգեւոր զաւակաց եւ բարեպաշտ ժողովրդոց, որ ինչպէս սովորութիւնն է ամենայն ազգաց՝ իրնէ անտի և Վրաքելոց ժամանակէն մինչեւ ցայսօր, ջերմեռանդ հաւատացեալք սուրբ Օտակի օրերը Արուսաղէմ կը դիմէին իրենց ուխտն ու հոգեւոր փափաքը կատարելու, եւ տնօրինական սուրբ Տեղեացս շնորհըն ու օրհնութիւնները վայելելու : Այն գեղցիկ սովորութիւնը պահած է նաև մեր ազգը, վասն որոյ տարուէ տարի քիչ շատ ժողովուրդ ջերմեռանդ սգւուլի կը դիմէն անձանէ ներկայ գտնուելու տնօրինական սուրբ Խորհրդոց, որ իւրաքանչիւր որբազան Տեղեաց վերայ կը կատարին ի վառապաշտ ողին օրշափ որ ուրախութիւնն է մեզ տեսանել Հայկազուն օրհնեալ ազգիս վերայ, իրը հայրենական ժառանգութիւն, զոր և պարծանք իսկ կը համարիմք ազգիս և քրիստոնէութեան, այսու ամենայնիւ փոքր ցաւ և վիշտ չէ մեր հայրական սրաբին, երբ կը տեսնեմք որ օրհնեալ բարեպաշտ ուխտաւորք իրենց հոգեւոր ուխտն ու երկրպագութիւնը կատարած ժամանակնին, մարմնաւոր հոգերով ալ մեծապէս կը տագնապին, և շատ ժամանակ իրենց ազգմից եւ բարեպաշտական պարտաւորութեանց կատարմանն ալ արգելք կ'ըլլան . և այս հոգերն են կամ առեւտուրի զբաղել հետերնին բերած տարանքներովը, և կամ ասկէ ապրանքներ գնել և բարեկամաց և ազգականաց համար ընծայացուներ առնել, որով իրենց ուխտաւորութիւնը կ'ըլլայ մարմնոց համար՝ և ոչ հոգեւոր : Աւսոի շարժեալի պարտաւորութիւնէ հայրական սիրոյս, մանաւանդ թէ ոմանց ջերեռանդ եւ խոհական անձանց թախանձանիներուն զիջանելով, մասնաւութեցինք սոյն գայթմական գործքերը եւ նեղութեանց պատճառաները խափանելու համար՝ առաջիկայ յորդորանց շրջաբերական կոնդակուս պատուիրել հայրաբար, սրպէս զիյետ այսօրիկ բարեպաշտ ուխտաւորք իրենց քաղաքէն ելլելու ժամանակնին հայկերոյթ ըստան ժողովրդին, ինչպէս կը լսեմք թէ շատ տեղեր կ'ընեն . և ոչ մահուեասցուք իրենց բարեկամաց կողմէն ընծայ մի ընդունին

տոսի, որոյ շնորհն և օրհնութիւն եղցիի ի վերայ ամենեցունցդ, եւ զամենեսեանդ առ հասարակ արժանի արացոցէ իւր սուրբ Տեղեաց տեսաւթեան եւ շնորհաց վայելլան : Այն Մերմեռանդ և բարեպաշտ ողին օրշափ որ ուրախութիւնն է մեզ տեսանել Հայկազուն օրհնեալ ազգիս վերայ, իրը հայրենական ժառանգութիւն, զոր և պարծանք իսկ կը համարիմք ազգիս և քրիստոնէութեան, այսու ամենայնիւ փոքր ցաւ և վիշտ չէ մեր հայրական սրաբին, երբ կը տեսնեմք որ օրհնեալ բարեպաշտ ուխտաւորք իրենց հոգեւոր ուխտն ու երկրպագութիւնը կատարած ժամանակնին, մարմնաւոր հոգերով ալ մեծապէս կը տագնապին, և շատ ժամանակ իրենց ազգմից եւ բարեպաշտական պարտաւորութեանց կատարմանն ալ արգելք կ'ըլլան . և այս հոգերն են կամ առեւտուրի զբաղել հետերնին բերած տարանքներովը, և կամ ասկէ ապրանքներ գնել և բարեկամաց և ազգականաց համար ընծայացուներ առնել, որով իրենց ուխտաւորութիւնը կ'ըլլայ մարմնոց համար՝ և ոչ հոգեւոր : Աւսոի շարժեալի պարտաւորութիւնէ հայրական սիրոյս, մանաւանդ թէ ոմանց ջերեռանդ եւ խոհական անձանց թախանձանիներուն զիջանելով, մասնաւութեցինք սոյն գայթմական գործքերը եւ նեղութեանց պատճառաները խափանելու համար՝ առաջիկայ յորդորանց շրջաբերական կոնդակուս պատուիրել հայրաբար, սրպէս զիյետ այսօրիկ բարեպաշտ ուխտաւորք իրենց քաղաքէն ելլելու ժամանակնին հայկերոյթ ըստան ժողովրդին, ինչպէս կը լսեմք թէ շատ տեղեր կ'ընեն . և ոչ մահուեասցուք իրենց բարեկամաց կողմէն ընծայ մի ընդունին

ոչ հագուստի և ոչ ուսեստի վերաբերեալ, որպէս զի շպարտաւորին իրենք ալ փոխարէն ընծայից՝ սուրբ Քաղաքէն պարգևներ տանել հետերնին, որով և պատճառս տալ ոմանց ալ սրտամնայութեան, ինչպէս բնական է շատ անդամ կը պատահի: Եւ ասկէ սա անպատշաճութիւնն ալ կը հետեւի, որ ինչպէս ըսինք, ուխտաւորք փոխարէն տրուելիք ընծայացուներուն մտմտուքով և զանոնք գնելու զբաղմունքով շատ անդամ կ'արգիլուին իրենց հոգեւոր ծառայութիւններէն ու պաշտամունքներէն, եւ ոչ կրնան հանդիսու ու անզբաղ մտօք ու խտերնին կատարել և աղօթակեցութեան պարապի: Առողմէ ի զատ նոյն ընծայացուներուն պատճառաւ թէ մոքսատունները և թէ բոլոր ձամբան որբան նեղութի կրելին եւ անոնց ծանրութիւնը իրենք թողլ վկայեն: Ուր թողունք նաեւ հասարակաց այն սիսալ հետեւութիւնը, որով կարծեն թէ ուխտաւորք հետերնին բերած ստակին գէթ կէս մասը սուրբ Աթոռոյս ողորմութիւն և ուրիշ բարեպատական Տեղեաց կը շնորհեն. եւ ասկէ գոյացեալ մաացածին գումարին չափազնցութիւնը սոյն հաշուով որքան միամիտ անձանց յանդէտս մեղանչելուն պատճառ ըլլար, որոյ սրխաւ կարծիք ըլլալը նոյն իսկ ուխտաւորք գարձեալ կը վկայեն: Վասն որս զասնք տեսնելով մենք, և օրհնեալ ազգիս օգուտառ մտածելով՝ ներկայ օրհնութեան կոնդակաւս կը ծանուցանեմք եւ հոյրական սիրով կը պատուիրեմք, որ ասկէ յետոյ թէ Աշրուսաղէմ եկած եւ թէ ետ գարձած ժամանակնին բնաւ իրարու պարգեւ չտան, բաց ի օրհնեալ մոմէ, և օրհնութեան կոնդակէ, զբ

քանի մի ժամանակ է գեղեցիկ սովորութիւն ըրած են սմանք ճշմարիս հոգեսէր եւ բարեպաշտ ուխտաւորք սուրբ Աթոռէս ընդունելով՝ իրենց ազնիւ բարեկամաց և կարեւոր ազգականաց ընծայ մատուցանել, իբր միակ բերք եւ պտուղ սուրբ Քաղաքիս, անոր սրբազան եւ Քրիստոսակամ տեղեաց օրհնութիւնները տանել հետերնին, եւ փոխարէն ընդունել իրենց բարեկամաց սէրն ու ուրախութիւնը: Կը յուսամք սիրելի զաւակունք մեր, որ այս մեր հայրական պատուէրները սիրով կ'ընդունել եւ կը կատարէք յօգուտ ձեր անձանց. վասն զի կան շատերն ալ որ սոյն ընծայացուաց պատճառաւ կ'արգելուին գալու եւ Քրիստոսի Աստուծոյ մերօյ սուրբ չարչարանաց Տեղեաց շնորհն եւ օրհնութիւնը վայելելու, որ անպակաս եղիցի ի վերաց ձեր ամենեցունցդ, եւ զօրացուցէ զձեղ՝ արժանի առնելով տեսութեան սրբոյ Դերեզմանի աստ և ի հանդերձեալն երկնից սուրբ արքայութեան փառացն, որում փառք:

Տուաւ օրհնութեան և յորդորանաց կոնդակս, ի սուրբ Աշրուսաղէմ Աթոռափելական Աթոռն սրբոց Յակովեանց, ի թիւ շնորհաց Փրկչին 1866 Հոկտեմբեր 1:

ԲԵՐՈՅՑԵԱՆ

ԱՌԱՋԻՒՄ ՈՒ ԳԵՎԱՔՎԱՒՐԹ ՊԱՏԱՆԻ

Ա.

ԳՐՈՒԱԾԱՔԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Ասկէ քիչ տարի առաջ զեռ մանուկ էինք մենք. վերջը մեծացնք տղայ եղանք. հիմայ պատանի ենք ու քիչ

ատենէն երիտասարդ՝ պիտի ըլլանք ու վերջը մարդ . ալ պիտի չունենանք , ոչ հայր , ոչ մայր , ոչ դաստիարակներ որ մեզի համար յօդնին քըրտընին , կարօտութիւննիս հոգան ու ամեն բանի մէջ մեզի տառաջնորդեն . մարդկանց ընկերութեան մէջ պիտի մտնենք , որպէս զի մենք ալ աշխատինք ու մենք մեզմէ բանի դործքի ետեւէ ըլլանք :

Արդեօք ի՞նչ բանի աւելի պիտի փափաքինք ան ատեն . արդեօք ազատ ըլլալեւ կամ թէ մեր վրայ աչք ունեցող մը չունենալ . բայց ընդհակառակն ան ատեն կապերնիս աւելի սաստիկ պիտի ըլլան . ուրիշ մէծեր պիտի ունենանք որոնք հօր մը ու մօր եւ դաստիարակոց պէս գթած ու քաղցր պիտի ըլլան . մեր սխալմունքներուն պիտի չներեն ինչպէս աղայոց կ'ընեն . եւ ոչ ալ խրատով կամ թեթեւ ու անցողական պատժով մը պիտի չխալըսինք անոնց ձեռքէն :

Արդեօք հարստութեանց պիտի փափաքինք . — ո՛հ , հարստութեանց փափաքն ալ մեզի նորանոր ձանձրութիւններու , խռովութեանց , իղձերու ու տհաճութեանց պատճառ պիտի ըլլայ , եթէ ուրիշներուն հետեւ եթէ մենք մեզի հետ . եւ վերջը վերջը , միթէ կարենա՞նք պիտի անոնցմով ուրիշներուն սիրելի ու մեծարյ ըլլալ : Եւ ոչ իսկ զուարձութիւնները պիտի ըլլան մեր վախճանը . վասն զի կը սեսնամ որ անսնք որ ժամանակնին այնպէտով կ'անցընեն , ոչ միայն յարդելի չեն , այլեւ ոչ ոք անոնց աղէկութիւնը կ'ուզէ : Բայց մենք կ'ուզէնք որ ուրիշները զմեզ յարդեն , կ'ուզենք որ մեր նմանները զմեզ սիրեն . վասն զի ասկէ աւելի աղէկ ու ցանկալի բան մը չկայ աշխարհիս մէջ :

Վասր հասնելու համար ի՞նչ պէտք է որ ընեմ : Պէտք է որ առաքինի քաղաքակիրթ կիրթ մարդ մը ըլլամ : Իսկ առաքինի ու քաղաքակիրթ մարդ մը ըլլալու համար ի՞նչ պէտք է ընեմ :

Պէտք է որ իմ պարունակութիւննամ ու կապարեմ . ասոր համար պէտք է որ ես վա՞ ո՞ւ շ-ը ները լու ճանշամ :

Ճապա ուրեմն , սիրելի պատանիներ , աս ուսման տանք զմեզ , ու լաւ մը մեր սրտին խորը թափանցենք . և չորս կողմերնիս մէյմը նայինք . ո՛հ , բնութիւնը ամենուն աչքին առջեւը բացուած գեղեցիկ պարտէզ մընէ , բայց վայ անոր որ աս պարտէզիս մէջ միայն ծաղիկ կը փնտուէ ու պտուղ չուզեր : Չորս կողմերնիս ունեցած տեսարաններանուս վրայ նայելով՝ զուարթացած սրտերնիս , մեր և մեր նմաններուն վրայ մտածելով՝ հարցընենք մէյմը մենք մեզի . ի՞նչ է մարդս , ուսկից կու գայ , և ուր կ'երթայ . ուսկից կը սովորինք որ ԲԱՐ ՈՒ ԵՐՁԱՆԻԿ ԱՊԻՆ ՄՈՒ ՄԻ ՄԻԱԿ ՀԱՍՏՐԻ է ԲԱՐԻ ԸԼՎԱԾՐ :

Բ.

ԱՍՏՈՒԱՃ

Աչքերս կը բանամ ու մէյմը երկրներին ու երկրիս երեսը կը նոյիմ . ո՛հ , ի՞նչ զարմանալի տեսարան : Արեւը անշարժ իր տեղը կեցած՝ չորս կողմէն լուսոյ ու ջերմութեան անսպառ հոսանքներ կը սփռէ . լուսինն անթիւ աստեղաց բաղմութեանը մէշէն կը գեղեցկացընէ ու կը լուսաւորէ գիշերները . վարդագոյն արշալցուը ոսկիի փայլունութիւն մը տալվ բլուրներու ծայրերուն՝ կարծեսթէ զմարդիկ աշխատութեն կը կահ-

չէ, ու իրիկուան թրթուուն վերջաւ լցոն ալ կամաց կամաց ամեն առար կաներուն վրայէն իրենց գցնը վերցընելով քաղցր կերպով մը զմեղ հանդշելու կը հրաւիրէ ։ Երբեմն երկեղի վիճակը մը սրբ տերնիս կը զուարթացընէ ու երբեմն ալ վախերնէս սմբած կը մնամք երբ որ որոտմունքի գոռում գոչումը ու կոյժակներուն շոռաշմունքը կը լը սեմք ։ Երկրիս վրայ տեսակ տեսակ կենդանիներու ցեղեր կան և ամենուն ալ տեսքն ու բնութիւնը տարբերէ ։ Ո՞հ, ինչ սիրուն ու գեղեցիկ ծաղիկներ կան, և ինչ անուշահամ պտուղներ ։ Հոս տեղ մը ընդարձակածաւալ գաշտավայր մը կը տեսնաս, անդին նեղնեղ հովիաներ, լեռները մէկ դիաց ինչուան երկինք կը բարձրանան, և վերջը սիրուն բրերակներով ու արգասաւոր սարահարթներով կը խոնարհին ու կը վերջանան ։ Աս լեռներուն գլուխներէն աղբերաբար ջրեր կը բխին եւ առուակ տուածկ կ'երթան կը միանան գետեր ջեր ու ձահիձներ ձեւացընելով, ինչուան որ ծովուն անհունութեանը մէջ երթան ընկղմին ։

Ո՞հ, ո՞լ է ըրեր այսչափ գեղեցիկ բաներ ։

Ասոնք ամենքն ալ յաւիտենական կանոնաւոր շարժմունք մը ունին մէշերնին, աստղները միշտ կարդով արեւուն չըրա կողմը իրենց շրջաննին կը կատարեն ։ Ո՞եր երկիրն ալ փոխադա և անփոխիս կերպով իր ամեն կողմը նոյն աստղին կ'երեւցընէ՝ դիշերն ու ցորեկը կարգաւորելով, անանկ որ և ոչ վայրկեան մը կը խոտորեն արշալցան կամ իրիկունը իրենց կարգէն ։ Երբոր գեղածիծաղ գարունը կը սկսի ծայր արձրկել գաշտերը կը կանաչան ու հաղորումէկ

գեղեցիկ գոյներով կը նկարուին, վարդերն ու մանիշակներն կը բացուին ։ Հողայն մէջի ցանուած հունտերն ալ կը սկսին ծլիլ, զեղձենին ու ծիրանենին ծաղկով ու տերեւով կը զարդարուին ։ Վերջը ամառը գալով ծաղիկները կ'անցնին ու պտուղները կը սկսին հասուննալ, ցորենը երկրագործին աշխատութիւնը կը վարձատը է, այն տղուն պէս որ իրեն բարի բարի գործքերով կ'ուրախացընէ իր հայրն որ զինքը մեծցուցեր ու դաստիարակեր է ։ Աշունը զուարձալի կը լսոյ այգիներով ու ձմեռուան հարկաւոր եղած պաշարը պատրաստելով, որ միջոցին կարծես թէ բնութիւնը կը հանդչի, որպէս զի ըստ ժամանակին նորէն սկսի իր պարտքը կատարել ։ Ասանկ կենդանիներն ալ կը ծնանին, կը մեծան, կը մեռնին, ինչպէս նաեւ տունկերը կը բողբոշեն, կ'ուրածանան, պտուղ կու տան, կը ծերանան ու կը կորսուին ։ Բայց ասոնց երկուքն ալ արգասիքներ կը թողուն, որոնք նորէն նոյն կեանքը կը սկսին ընել ։ Ո՞երջապէս ամեն բան կանոնաւոր շարժմունք մըն է ։

Ո՞հ, ո՞լ տուաւ ամեն բանի առջի շի շարժմունքը ։ Ո՞լ է որ կը կարդաւորէ տա ամեն շարժմունքները, որ ասանկ տարբեր՝ բայց միանդամայն տա աստիճան ալ կանոնաւոր են ։

Եկեղեցնայ մէջ ան տեսած արձանդ (1), առաջ կոշտ ու տձեւ քորի զանգուած մըն էր ։ Ան հրաշակի պալատը, աղիւսի, կրի, աւազի, գերաններու, քարերու ու կղմինտրներու կոյտ մըն էր, Ժամացոյցն ողորմելի մետաղի մը կտոր էր՝ ուսկից ձեւացան անիւները, զաղանակները, բոլորակները՝ որոնք ժամանակները կը

(1) Հայ արձանը պէտք է լսուին եկեղեցւ համար խմանալ ։

չափեն : Յօէ որ մէ կը քեզի ըսեր որ
Այդ ժարի իբորը ինչիրեն արյանի դժբան-ե-
յան , ան նիւթերը իրեւէ իրենցի տովէ տով
գուշլ մաշան , Բայց անանի իւրաքանչ հան-
գիսս ու գեղեցի պալսա ըլ յեւայր-յին .
ան Ներաշները պատահմամբ մէկմէկու հետ
միահալչ առ ժամացոյցը յեւայր-յին . թէ
որ մէ կը քեզի ասանկ ըսեր , խենթի
տեղ չեիր դներ այնպիսին : Ո՞րչափ
աւելի խենթ պէտք է սեպենք այն
մարդը , ով որ կ'ըսէ որ աս աշխարհքս
ասանկ կարգաւորեալ , ասանկ կա-
տարեալ ինքիրեն եղած է :

Բայց ո՞վ ուրեմն կազմեց ասիկայ ,
ով կարգաւորեց :

Ես ծնայ . ուսկի՞ց , իմ հօրէս . իմ
հայրս , պապէս . պապս , իր հօրէն ,
ինքն աւ ուրիշ հօրէ մը , եւ այսպէս
առաջ կ'երթանք ինչուան որ հաս-
նիք առջի մարդուն . բայց ասիկայ
ուսկի՞ց կրնայ առաջ եկած ըլլալ . ու-
րիշ մարդէ մը չէ , վասն զի ան ատեն
ինքն առջինը չեր ըլլար . ուրեմն ա-
նանկ էակէ մը՝ որ մարդէ մը անհա-
մեմատ վեր եղած ըլլայ , և ինքն ան-
սկիզբն ըլլալով՝ ուրիշ ամեն բանե-
րուն սկիզբն տուած ըլլայ :

Ես ամեն բաներուն հեղինակը ,
աս առաջին շարժողը , աս կարգաւո-
րողը , աս առաջին պատճառը , աս
ընդհանրական հոյրն է , ԱՍՏՈՒԱԾ :

Պիտի լարուակուի :



ՆՇԽԱԲԻ ԱԶԴԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(Հարունակութիւն , տես թիւ 9 . երես 145:)

Երբ թէքիրտաղու այլազդիք կըր-
կին իրենց տները ընդունեցին խեղձ
հայերը ըստ հրամանաց դատաւորին ,
Գրիգոր վարդապէտ ու քահանայք
և երեւելի ազդոցինք մէկտեղ ժող-

մէլով , խորհուրդ ըսին , ու Գրիգոր
վարդապէտը քանի մը քահանայիւք
և ժողովրդեան կողմէն քանի մի ե-
րեսփոխաններով խրկեցին ի Պօլիս
Կաղացի գործած մատնութեանը հա-
մար գանգատ ընելու իրենց առաջ
նորդ Յակոբ վարդապէտին , որ նոյն
գէպքը պատահած ժամանակի ի Պօ-
լիս գնացած էր : Տէր Կաղաք որով
հետեւ ազդեցութեան տէր անձ մի
էր , և նոյն ժամանակի Պօլսոյ յառա-
ջակայ ազգապէտաց հետ մտերմա-
ցած , վասն որոյ Յակոբ վարդապէտ
որբան ու զեց զանիկայ ի դատաստան
կոշել , սակայն թէ անոր պաշտպան-
ներէն ակնածելով , և թէ վախնալով
որ չըլլայ թէ անոր պատճառաւ ազ-
գապէտաց հետ խռալելով , որգելք
ըլլան թէքիրտաղու մէջ հիմնարկե-
լիք եկեղեցւոյ շինութեանը , վասն
որոյ տէր Կաղաք ոչ միայն առանց
պատճոյ մնաց , այլեւ աւելի փա-
ռաւորեցաւ . քանզի Գրիգոր Բ . Պօլ-
սոյ Պատրիարքը այն միջոցին ի Կեսա-
րիա իւր հայրենիքը գտնուելով . խըր-
կեցին վաղացու երթաց բերէ զին-
քը իւր Աթոռը : Եւ ինչպէս կ'ըսէ
ակնատես պատմիչը , « Եւ քանի
մի աւուրց Կեսարացին (Գրիգոր
Պատրիարք) մէծաւ ամբոխիւ ե-
մուտ ի Եւղանդիա ահեղագոչ եւ
խրոխտ կերպիւ որպէս զառիւծ , որ
ամենայն Հայոց ազդն սարսեցին ի
նմանէ : (1) »

Յակոբ վարդապէտ , ինչպէս հա-
ւանական կը թուի , թէքիրտաղ դառ-
նալուն , եկեղեցւոյ հիմնարկութեան
անմիջապէս հոգ տարած է , որոյ շի-
նութեան հրովարտակը , ինչպէս ը-

(1) Գրիգոր Պատրիարքի թէ բնաւորութիւնը և
թէ իւր իշխանութեան ժամանակ գործածները յա-
տուի յօդուածով հրատարակելու կարեւորութիւն
անփ :

սինք, առ աջնորդութեան հետ մէկ տեղ ստացած էր : Եւ սոյն ձեռնարկութիւնը օր մի առաջ ի գլուխ տանելու համար ստիպուած էր հաեւ առ ահի Դրիգոր Պատրիարքին, որոյ հետ աւրուած ըլլալով՝ յիշեալ հրովարտակը ոչ անոր թագրիբռշը, այլ ինչպէս գրած եմք, ազգային քանի մի երեւելեաց և իւր բարեկամ յշնիչը աղասի Խալիլ Փաշային միջնորդութեամբն ստացած էր թէ հրովարտակը և թէ առ աջնորդական պաշտօնին հրամանագիրը :

Աս պատմութեան կարգը կը ստիպէ զմեզ ուրիշ դէպքի մի դարձնել մեր տեսութիւնը :

Դ'ԷԼԱԼԻՔ սոյն միջոցին (1608—1609) այն աստիճան զօրացեր էին, մինչեւ կայսերանիստ քաղքին մօտենալով կը սպառնային յարձակում տալու, որոնց կողմէն լրտեսներ շատնալով մայրաքաղաքին մէջ, թէ տաձիկ եւ թէ հայ անծանօթ մարդիկ առանց երաշխաւորի չէին թողուր պարտիլ, Այն Դ'ԷԼալիներուն գլխաւորներեն՝ Վալանդար օղու կոչուածը ահագին զօրօք Պրուսայի վերայ յարձակելով կը թալանէ քաղաքը, և պժդալի խայտառակութեամքք պատռաւոր ընտանեաց սիրտը դառն սրդով կը լեցընէ . որոյ վերայ թէպէտ Ուլլդան Վհմէտ բանակաւ կու գոյ, բայց չկարենալով անոր ընդդիմութիւնը խորտակելու, ունայն ետ կը դառնայ իւր Վթոուը : Ուլլրատ Փաշայ Գույուճու անուանեալ, որ այն ժամանակ առաջին Վէզիր էր, յանձն տռնելով Վնատուրուի ընդհանութիւնը, անթիւ զօրօք կը յարձակի ելուզակաց վերայ . ձերբակալ կ'ընէ անոնց գլխաւորները, որք են Ուլլրատ խոնցի երեք եղբարքը Ուլլրատ Փաշայ, Դպրա-

հիմ Պէկ և Ուլլրատ Պէկ, և Բարեկթի կողման Շիրին Պէկը և ուրիշ անհամար գլխաւորները իրենց զօրբերով մէկտեղ ի սուր անցընելով, զանոնք ամենքը առաջուց պատրաստուած փոսերու մէջ լեցընել կուտայ . որոնց մէջ երկու երեք մարդիկ իջնելով, կ'ըսէ ականատես մի, անոնց դիակները կարդաւ կը շարէին և լեցուելէն յետոյ փայտերով և հողով կը ծածէկէին : Այսպէս Ուլլրատ Փաշայի ձեռօք կը յաջողէ Տէր, և անչափ անմեղ արեանց և արտառաց վերջ կու տայ, բառնալով յաշխարհէս անօրէն Ճ'Էլալեաց չար ծընունդը :

Ուլլրատ Փաշայ երբ յաղթանակաւ ետ դարձաւ և փառաւոր հանդէսով մտաւ ի մայրաքաղաքն (1609 ին վերջերը), հրաման հանել տուաւ Ուլլդան Վհմէտէն, և մունետիկի ձեռօք իմաց տուաւ բոլոր քաղաքին, թէ որքան պանդուխով որ կան Պօլսոյ մէջ թէ տաճիկ և թէ քրիստոնեայ, մինչեւ երեք ամիս ամենքն ալ պատրաստուին իրենց հայրենիքը դառնալու . և կը սպառնայր նաեւ որ պայմանեալ օրը անցնելէն յետոյ գտնըւող պանդուխով պիտի աքսորուին : Այն հրամանը ամեն ամսագլխին մունետիկը կը կրկնէր բոլոր մայրաքաղաքին մէջ . Պայմանեալ ժամանակի ըլլրանալուն ոստիկաններ եւ չափաներ խրկուեցան Պօլսոյ բոլոր թաղերը ու շրջակաները, որոնք ուր որ օտար մարդիկ գտնէին, բռնութեամբ և ըսպառնալեօք գուրս կ'ընէին և կը փութացընէին անմիջապէս ճպմբայ եւ նելու . և երբ տակաւին շատերը կը դանդաղէին մեկնելու, ոստիկանութեան մարդիկը սկսան այնուհետեւ բրօք ու ֆալսիայով պատրամիլ, և տանը մէջ անցայտ տեղուանք պահութողը

ները իւրաքանչիւր թաղի իմամներուն ձեռքովը դուրս հանելով, կարասիները դուրս թափեցին ու դըռները կղպեցին։ Աւելորդ է նկարագրել աղջտալի տեսարանիս պարագայները։ միայն այսչափ կ'ըսեմ որ անհնար էր տեսնել խեղճ կանայքն ու մանկտիբն անտերունչ ու անօդնական մնացած փողոցներուն մէջ, ու աղջիսարշ ըլլալ, և քանի մի կաթիլներ անոնց աղի արտասուացը հետ չլսունել։ Ողորմելի աղդայինք երբ տեսան իրենց մէջ և իրենց բաղդին վլճակեալ նաեւ Գրիգոր վարդապետը կամախեցին, ինկան ոսքը և ստիպեցին որ ինքը տիրութիւն ընելով՝ առաջնորդէ իրենց մինչեւ ի հայրենիք։ Յանձն առաւ աղդասիրութիւն մինչեւ յերկիրն անոնց ընկերացաւ։ Հրամանը որքան որ սասաիկ էր, սակայն դանուեցան շատերն ալ որ թէ կաշառօք և թէ արքունի գործակալաց ձեռքին տակ ծառայելով՝ մնացին տեղերնին, ինչպէս նաեւ անոնք որ Առուղան Վհմէտի կոչուած մըզ կըթին մէջ կը բանէին։

Այս հրամանը թէքիրտաղ ալ խրկուեցաւ, և արքունի մունեաիկը սկսաւ սպառնալեօք ստիպել այն տեղի նոր գաղթականութիւնը, որ իրենց երկիրը գառնան։ Իայց Ասուած անոնց առջի քաշած նեղութիւնները յիշելով ողորմեցաւ, եւ զիրենք դուրս հանելու համար խըրկուող սասիկանաց սիրտը քաղցրացցց. մտիկ ըրին սիրով խեղճ ժողովոց խնդիրը, որոնք կ'առաջարկէին հնազանդիւարքունի հրամանաց, և կը խնդրէին որ իրենց մինչեւ աշնան եղանակը ժամանակ շնորհուի, որպէս զի իւրաքանչիւր ոք իրենց արտերը հնձեն ու այդինին քաղեն. վասն զի, կ'ըսէին, մեր բոլոր ըս-

տացուածքները հողոյն աւանդած եմք. որովհետեւ ամենքն ալ հողագործ ու այգեգործ էին. Անոնց այս իրաւացի խնդիրն ընդունուեցաւ, և միջոց շնորհուեցաւ իրենց՝ մինչեւ աշուն։ Իսկ երբ ժամանակը քիչ մի անցաւ, արքունի հրամանն ալ բնականապէս թուլցաւ. սրայմանեալ օրերն եկան մօտեցան, և ոչ ոք յիշեց զիրենք, եւ ոչ մէկուն դուռար ոստիկանութեն մարդ եկաւ զիրենք դուրս ընելու. այսպէս մնացին թէքիրտաղու կամախեցի աղդայինք իրենց տեղը մինչեւ ցայսօր։

Տասը տարի անցեր էր այս դէպքերուս վերայ, խեղճ ժողովուրդը իրենց նոր հայրեննեացը հաղիւ սովորելով, և իւրաքանչիւր ոք իրենց բանին գործին ետեւէ ինկած՝ որը երկրագործութեան, որը այգեգործութեան և ուրիշ ծառայական արհեստներու պարապելով՝ իրենց օրական պիտոյքը հոգալու կը զբաղէին, եւ քիչ շատ հողի տէր ալ եղած էին, երբ յանկարծ նոր փորձանք մի դարձեալ զիրենք խոռովուց։ 1620 դէկտեմբեր ամսոյն մէջ, հայ երիտասարդին մէկը, որ արհեստիւ բամբակ գլող (հալած) էր, բամբակի համար հոռմի մի տուն երթալով և հոն չափահաս աղջկան մի հետ սիրահարուելով՝ խօսք մէկ կ'ընեն զիրար առնելու. աղջկան ծնողքն ալ հաճութիւն կուտայ անոնց միաւորութեանը։ Երիտասարդը առաջնորդին կ'իմացընէ և կը խնդրէ որ հայ եկեղեցւց մէջ քահանայից ձեռօք պսակուին։ Առաջնորդը յունացմէ կասկածելով և ապագայ խոռովութեան տեղիք շտալու համար հաճութիւն չտար. եւ երկու սիրահարեալք մանչուն տանը մէջ հայ քահանայի ձեռօք կ'ընդունին պսակին օրհնութիւնը։ Տեղոցին

այլազգի ռամիկ ժողովութը դիսնաւով որ այս բանս Յունաց ազգային ոգեշն խիստ հակառակ է, կը սկսին երդիծաբանութեամբք զանոնք դըր գուել, որոնք չկարենալով համբերել մէջերնէն խումբ մի տարբլուխ պատանիք միաբանելով լռւսնի պարզգիւ շեր մի կ'երթան Հայոց պարտէզները մէկ շատ ծառատունկեր կը կու աբրտեն և 16 այգի կ'աւրեն բնա զինչ կ'ընեն: Յետոյ այլազգեաց հետ կը միաբանին և զանոնք Հայոց գէմ կը զայրացընեն լսելով, թէ “մենք Յօնք և Տաճիկ՝ այս քաղըքի բունըը հակիներն ենք. Հայք դեռ երեկ եկան և մեր բոլոր կալսածոց և այգիներուն տիրեցին, եւ մէկ ստակ եւս հարկ չեն վճարեք տէրութեան: Եկէք զանոնք հալածենք և իրենց ըստացուածքները մեք ժառանգեմք”: Այս դիւական խորհուրդո՞որ իշտրիս միշտ միաբան կ'ըլայ լստ առածին, շուտովի գլուխ կ'ելնէ: Տաճկաց մէջէն յիսուն հոգի ճակար մի կը դրեն, կը կիքեն ու կու տան Յունաց. եւ անմիջապէս վաթսուն հոռոմ ձամբաց կ'իյնին Պօլիս երթալու և Համար բողքը ընելու մ. Դուռը: Հայք լսելով զայս՝ Յունաց ետեւէն իսկոյն քանի մի անձինք կ'ու զարկեն մոյրաքաղաքը, ազգին կառավարութեանը իրենց վիճակը իմացընելու:

Այն ժամանակները երեւելի էր Պօլսոյ ազգայնոց մէջ խալֆա Ասուածատուր Ամիրան, և ուրիշ շատ ամիրաներ, որոնց խօսքը երկուք չէր ըլլար տէրութեան պաշտօնէից քով: Խալֆա Ասուածատուրը սիրելի էր առաւելապէս Հասան Փաշայ վեզիրին և ի մանկութենէ եղայրագիր եղած էր անոր. որ դեռ խաստի եղած ժամանակ, նոր մզիթին վերայ

հպատակ (բայա) դրել տուած էր պանդուխու հայերը և ներքինապետին խնամոցը յանձնած: Թէքիրտառ զի հայք շուտ մի Ասուածատուր ամիրային եղելութիւնը հասկրցընելով, և անոր միջնորդութեամբ Հասան Փաշայի ականջն հասնելով, երբ ասիկայ իւր պալատէն ելնելով ձիով տառենը կ'երթար, Յօնք պատրաստուած անոր Ճամբուն վերայ երկու կարգ շարուած կը սպասէին գըլ խընուն վերեւը բարձր բռնելով ճանարը, երբ տեսաւ զանոնք մեծ Ա կ'զերը, իբր յանգէտոս հարցուց՝ թէ ով են ասոնք: Յօնք մէկէն երկու կողմանց այնպէս փութացին Ա է զիւրին վերայ ճակարը տալու համար, որ ձին խրաչելով քիչ մնաց գետին պիտի ձգէր Հասան Փաշայն: Ասօր վերայ զայրովթը աւելնալով փրփրեցաւ Յունաց գէմ, ու ճակարն առնելով պատռեց նետեց, ու հրաման ըրաւ իւր մորդոց որ բռնեն զանոնք ու խալիֆն լեցընեն: Այս սպառնալիքէն լեզապատառ եղած փախչող փախչողի եղան, ու եօթը հոգի միայն ձեռք անցնելով նետեցին խալիֆն, ու մընացեալները ամօթով ու լոիկ դարձան մէկիկ մէկիկ թէքիրտաղ: Կատ ժամանակ չանցաւ, Հայերն ալ ետ դարձան հրամանագրով ու Մադաշիրը, որ քննութիւն ընելով և այգիներուն վեսա տուողները գտնելով ըստ արժանելոյն պատժուին: Այս գեստանին մօտ Վուրօսթը ըսուած դիւզի տաճկըները թէպէտ եւ եկած էին վկայութիւ տալու, սակայն հոռմըները անոնց դիմացնին ելնելով կը կաշառեն եւ ետ կը դարձնեն, եւ այսպէս վկաները սմանք երկիւզիւ և սմանք կաշառքով կը լւեն. բայց Յունաց ամբարտաւանութեան եղջիւր ներն արդէն փշրուած էին:

Գանք երկու տարացեղ ամսւաշնացելոց : Այդիներուն գէպքէն տռաջ Յօնք ազջկան ծնողացը գէմ սկսան զայրանալ և մահուան սպառնալիքներով ահացընել . որսնք առ երկիւղի ուրացան իրենց հաճութիւն տալը , ու ազգին կամոցը յանձնեցին որ ուղածնուն պէս վրէ ժխնդիրը ըլլան երկու տարաբազդ ամոներուն : Խօկցն քանի մի երիտասարդ կը կոխեն մանչուն տունը և ազջիկը յափշտակելով կը տանին գատաւորին , ու միաբերան կը պօւան՝ թէ լաւ է տաճկանայ քան թէ չայ ըլլայ . եւ բռնութեամբ զինքը կը տաճկացընեն . ու մանչն ալ որ հետերնին կ'երթար , լաւ մի կը ծեծեն ու կը թողուն . Եւ որպէս զի ըրլայ թէ ազջիկը նորէն երկանը քով փախչի երթայ , Խմամի մի տունը ի պահ կու տան զինքը . խեզը ամենայն զօրութեամբ կը պօւար թէ չայ եմ և քրիստոնեայ , բայց մտիկ ընող չկար . երեք օր ոչ հաց կ'ուտէ և ոչ ջուր կը խմէ . օրերն ալ Օննդեան պահոց մէջ էր . Յօնք որովհետեւ այն շաբաթը մաեզին կ'ուտեն , շարութեամբ ուտեաց կերակուր կը տանին իրեն որ չայու պասը աւրել տան . բայց ազջիկը եւ ոչ ամսնին վերայ ակնարկ մի կը ձըգէ . Աղօրմելին ազատութեան ձար չգտնելով լուր կու տայ երկանը որ գայ զինքը գաղտնաբար յափշտակէ ու անծանօթ երկիր մի երթալով հան կրկին իւր հաւատքը պաշտէ : Երիտասարդը երբ տեսաւ որ զանիկայ գողնալու ձարը չկար , գնաց գատաւորին քով ու խօսք տուաւ տաճկանալու և իւր կինը առնելու : Այրով ընդունուեցաւ անոր խնդիրքն ու դաւանաւթիւնը , բայց մնաց առանց թլիքատուելու . զօր տեսնելով Յօնք քահանայ մի Շէյթան փափաղ

հուն , սկսաւ ձիչ բառնալ ու ըսելթէ թլիքատեցէք զինքը , որ չերթայ կրկին հայութիւն ընէ : Ամուսնական սէրը անոր ալ գէմ չէցաւ , ընդունեց թլիքատութիւնը , ու մէկ քանի օր սպասելէն յետոյ առաւ իւր կինն ու փափառ օտար երկիր . հան ապաշխարեցին երկու սիրակից ամսամինք , և զզման արտառնքներով լուացին իրենց հոգւցն աղոր , զօր աշխարհոցին սիրոյն բռնութենէն կը ըեցին :

Այսքան չարիքն բաւտկան չսեպելով Յօնք , գիշեր ժամանակ յարձակեցան ուէիս Եւերսէս անուն երեւելի մարդուն տունը քարոսեցին . և որովհետեւ քաղաքական անձ մի էր Եւերսէս , նյյն ժամուն իրեն քով զօրաց բանակի վերաբերեալ բաւական մարդիկ գանուելով , դուրս կ'եւնեն ու քարկոծովներէն քանի մի հոգի կը բռնեն , և հետեւեալ առտուն ի գատարան կը տանին և գատաստան ընել տալով գատաւորէն վճռոյ թուղթ կ'առնուն որ Պօլիս տանելով և տէրութեան հրամանաւ մահուամբ պատժել տան զանոնք : Խսկ քաղաքին մեծամեծ տաճկըները Յունաց կամակից ըլլալով , միջնորդ եղան և աղատեցին յանցաւորները և բանակի մարդոց ալ սիրոր առին :

Այն տարին էր օր սաստիկ ձմեռ և ահագին ձիւն գալով այն աստիճան ցրաեց , որ Վասփորի ծալը պաղեցաւ , և Վալաթիայէն Իւսկիւտար քայլելով կ'երթային կու գային , իթագաւորութեան Առլդան (Սամանայ Բ. յամի Փրկչին 1621 եւ յունուար ամսոյն 17 ին :

Ի յաջը՞՞ :

ՀՈՊԵՏՈՐԻ ՇՀԽԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Հոգեւոր իշխանութիւնը, որ և ուրիշ բառիւ կառավարութիւն կամ տեսչութիւն եկեղեցւոյ կ'ըսուի, յատուկ իրաւասութիւն մի է անկախ և բացարձակ՝ հիմնեալի վերայ օրինաց և կանոնաց եկեղեցւոյ։ Այսիւ իշխանութեանս քրիստոնեութեան հինգարերուն մէջ ի՞նչ մեծ ազդեցութիւն եւ զօրութիւն ունենալը եւ ներկայ ժամանակիս մէջ ի՞նչ զգալի նուազութեան և տիկարութեան մէջ գտնուիլը իմանալը համար՝ բաւական է մարդ անդամ մը ակնարկ տայ պատմութեան։ Հոն պիտի տեսնէ այնպիսի դէպքեր, որոնք յայտնի կը ցուցընեն հոգեւոր իշխանութեան ինչուան աշխարհի թագաւորաց վերայ ունեցած մեծ ազդեցութիւնը։ Թէոդոս հզօր կայսր մը խոնարհած կը տեսնէ եկեղեցւոյ պաշտօնէի մը դիմաց, որոյ զէնքը ուրիշ բան չէ, եթէ ոչ Աստուծոյ բանը։ Պատմութիւնը կը ցուցընէ մեզ նաեւ թէ նախնի Պատրիարքունք մինչեւ անդամ արքունի գործոց միջամտութիւնէին։ վասն որոյ անդամ մի ծերունին Անդրոնիկոս Բալէոլոդ Յունաց կայսրը պատգամ խրկեց Պատրիարքին որ միայն եկեղեցւոյ գործքերուն խառնուի, և պետութեան գործքերը կայսեր ձեռքը և անոր կամացը թողու։ Որուն այսպէս պատասխան խրկեց Պատրիարքը։ “Այդ խնդիրը ճիշդ նման է, որպէս թէ մարմինը լսելու ըլլայ հոգւոյն, թէ մեր մէջը հասարակաց բան մի չկայ, քու օգնութեանդ պէտք չունիմ իմառան ձին գործքերուս մէջ”։ (Կանդակուզենոս), Պատասխանը որչափ որ աներկիւղ՝ այնչափ ալ աչքի դարնող է։ Եւ այս գեղեցիկ բաղդատութիւնս

որչափ ճիշտ ու նմանագոյն ըլլալը բացատրութեան կարօտ չէ, և ոչ թերեթիս անձկութիւնը կը ներէ մեզ երեկորէն խօսիլ սոյն նիւթիս վերայ, թէ պէտք ժամանակիս պարագայից նըկատմամբ խիստ կարեւորութիւն ունի։ Կը մնայ մեզ միմիայն անցեալդարերու եկեղեցւոյ իշխանութեան վիճակը աչքերնուս գիմացը ունենալով ներկայ հոգեւոր իշխանութեան վերայ խորհրդածել, մանաւանդ թէցաւիլ և վշտանալ սեսնելով անոր իրաւասութեան այն աստիճանի տկարութեան հասնիլը, ինչուան չէ թէթագաւոր մը, արքունի անձ մը եւ իշխանաւոր մը, այլ լոկ պարզ անհատ մը հոգեւոր իշխանութեան դէմելզուագարերով։ հրամաններ կ'արձակէ, վճիռներ կու տայ։ Այնպիսի իշխանութեան և կառավարութեան դէմ, ուսկէ տիեզերասաստ և աշխարհակալ թագաւորները կը պատկառէին և կ'ահաբեկէին, այսօր կը տեսնենք որ մարդոց մէջ ամենէն նըւաստը կը յանդգնի անոր դէմ որուտալ, և սպառնալիք ընել, և առանց իրողութեան մը ստուգութիւնը գիտնալով, հակառակ ոգեւով կը ունել, եւ ջանալ թէ որ կարելի է նէ, աշխարհիս առջեւը առակ նշաւակի ընել, և ստիպել զինքը յանիրաւի զրպարտեալ եկեղեցականքը պատճելու, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ հոգեւոր իշխանութիւնը յետին աշխարհականի մը ձեռքը մատնել և անոր խաղալիք ընել, որպէս թէ եկեղեցական իշխանութիւնը չկրնայ և չուզէր պատճել յանցաւոր մը։

Այս անպատեհութիւնները չեմ սխալիր հետեւանք համարել ազգային աշխարհիկ վարչութեան մը նըւազանալուն, որ հակառակ հին դարերու եկեղեցւոյ բացարձակ իշխա-

նութեան՝ երբոր մէկդիէն կը ջանայ հոգեւորը մարմնաւորին տակ նուածել, միւս դիէն ալ տեղիք կու տայ ասանկ անպատշաճ վարմունքներու, որուն արդիւնքը ուրիշ բան չէ, եթէ ոչ իսպառսպուռ ջնջումն եկեղեցւոյ իշխանութեան, որ է հիմն և հաստատութիւն կրօնի:

Առաքելական սուրբ Աթոռոյս հոգեւոր իրաւասութիւնն ալ կրած է շատ հեղ, և տակաւին կը կրէ այս կերպ յարձակումներ ու ինչուան անդամ սպառնալիքներ ըստ պահանջման ազատախօս գարիս . սակայն . Ա. Աթոռու եկեղեցւոյ պատիւը պահելու և հոգեւոր իշխանութիւնը հասարակ մարդոց առ ոսն կոխել չուալու համար վեհանձնաբար լուելու կը պարտաւորի, և կը ներէ բոլոր անոնց որոնք խոժոռ դիմօք իրեն կը նային . Թող տալով Ազգային Վարչութեան կամացը, թէ որ պատշաճ կը դատի, զանոնք յուղութիւն և ի պարկեց տութիւն հրաւիրել, համ եւ հոտ դնել անոնց լեզուին, որ խօսին ինչ որ պատշաճ է իրենց բանականութեան, և գրեն ինչ որ օգտակար, և ոչ թէ անստուգութիւնը ստուգութեան պատրուակ ընելով՝ գայթակեղեցնել զներմեռանդ հասարակութիւնը, որոյ համար կը յիշեցընեմք իրենց Քրիստոսի Տեառն մերոյ խօսքը . Ապէլ . ԺԼ . 6 :

Այս է աւասիկ Հայոց հոգեւոր իշխանութեան արդի վիճակը :

Ժամանները այցելութեան երթալով, հետագայ համառօտ տեղեկութիւնը կը հաղորդէ մեղ: Յայսնի է թէ Եղեսիոյ մէջ | ուսաւորչական և Ութիւննեան անուամբ ընկերութիւններ կան ժամանակէ ի վեր հաստատուած, որոց հսկողութեան տակ կը գտնուին դպրատունները . ահաւասիկ յիշեալ դպրատանց աշակերտաց թիւը եւ անոնց առած ուսմունքը, որ ոչ այնչափ գոհունակութեան եւ գովութեան՝ որչափ որ քաջալերութեան արժանի են .

| ուսաւորչական ընկերութեան Ա. դպրատան ուսանողք .

Քերականնութիւն սորվող	22
Նյուը՝ գիշերային դասառուք	11
Հասարակ ընթերցման պարապող	9
Նյուը՝ գիշերային ուսանողք	30

72

Այս Ա. դպրատան աշակերտաց տնօրէն դասառուէ Աթեւեան ակրացու Յակոբ վարժապետն Աւրֆացի:

Բ. դպրատան աշակերտ նյուըն ընկերութէ,	որոյ դասառուէ Քէօսեանց տիրացու Յակոբ Աւրֆացին:
Կարեկ, զէն հոգեւոր և գործոց	8
ուսանողք	10
Պաղմոս կարդացողք	14
Հեգերէն	17
Քերական	49

Ութիւննեան ընկերութեան Ա.
դպրատան ուսանողք որոց դասառուէ տիրացու Վրիգոր Ականուրեան:
Կարեկ, զէն հոգեւոր և գործոց
ուսանողք
Պաղմոս և հեգերէն
Քերական

17

39

27

88

Բ. դպրատան՝ նարեկ, գործոց, ընթերցարան եւ այլն ուսանողաց թիւն

25 հոգի, և դասատու տիրացու մահակնի Սարգիս Վաղաքեան։ Չորս դպրոցին մէջ ընդամենը ուսանողաց թիւն է 194 հոգի։

Վիլիսու դպրատան աշակերտք .	
Ըստարան կարգացողք	4
Ետքեկ	7
Տաճկերէն Աստուածաշունչ	1
Տնարգմանութիւն ընող	2
Կոտակարան կարգացողք	5
Ճամագիլք	3
Սաղմոս	11
Բնժերցարան	1
Հեգերէն	7
Քերական	28
	68

ՆՈՒՄՐԱԾՈՒՔ

Տատեան Վսեմաշուք Առաքէլ է ֆէնտին շնորհեց սուրբ Աթոռոյս թանգարտնին,

Ո՞էկ կտոր քարացեալ անդիս։

Վեց պղտիկ անդիս պատուական քարեր։

Ո՞էկ դանակ սալի՛ ըսուած։

Տատեան Վսեմաշուք Աբրոէս պէտ նուիրեց սուրբ Աթոռոյս թանգարտնին,

Ո՞նդղիս թագաւորական պալատին ամեն կողմէն առնուած տեսքերը, զատ զատ փորագիր տապուած։

Չորս կտոր մեծագիր գրեանք զանգան նկարներու։

Ո՞էկ մանրագիտակ (microscope) հանդերձ իւր պարագաներով։

Պ. Տատեան Վսեմաշուք Սիմօն պէկը շնորհեց՝

Ո՞էկ ելեքտրական գործիք մը մէծ, որց ապակիին տրամագիծն է 82 հարիւրամետր։

Ո՞էկ փոքր առձեռն նոյն ելեքտրական գործիքէն։

ԱԴՅՈՒԱՄՆԵԿԱՔ

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՋԱԿԱՆՔ

(ՏԵՇ ԹԻՒ 9 ԵՐԵՎ 157)։

ՃԳ. Հարցման ը-ծռ-ճը՝ լեռ է ինչոր 320. ՃԳ. Հարցման ը-ծռ-ճը՝ էր գինին իւս 126։ ՃԵ. Հարցման ը-ծռ-ճը՝ լեռ էր գին յիշ 616 Դ-Կէկան։ Ճ.Զ. Հարցման ը-ծռ-ճը՝ հասանարեաց գաղափռն յա-
— 70 —

Հարցուհն ՃԵ.

Եաւ մի երթայր լի ցորենով, և կէտ մի զհետ մտեալ նաւին, նաւ որդքն երկեան և ընկեցին նմա կեր զհասարակ (կէս մասը) ցորենոյն, և յերկու աւուրն ընկեցին զհինդ մասն միացելցն։ յերրորդումն՝ զութն, ի չորրորդումն՝ զեւթն, ապա ի նաւահանգիտոն հասին, և մնաց ԿՄ (7200)։

ԱՐԴ., գիտեա թէ ամենայն քանի լիեալ էր։

Հարցուհն Ճ.Յ.

Ապաղարէ մի էր իմ, խանգարեցի և այլ սպաս արարի, զերեք մասն մեսուր մի արարի, և զսորրորդ մասն այլ մեսուր արարի, և զհինդ մասն երկու բաժակս արարի։ և զմեցն՝ երկու սկուտեղս արարի, և երկու հարիւր և տասն դրամէ սկաւառակ մի արարի։ ԱՐԴ., գիտեա թէ ընդ ամենայն քանի էր լիեալ ապաղարէն։

Հարցուհն Ճ.Յ.

ԱՅՐ մի յերիս եկեղեցիս եմուտ, և խնդրեաց Աստուծոյ յառաջնումն՝ եթէ տուր ինձ որչափ ունիմս, եւ տամ քեզ քսան և հինդ գահեկան։ Այնպէս և յերկորդումն ետ զքսան և զհինդն, և յերրորդումն։ և առիւր ոչինչ մնաց։ ԱՐԴ., գետեա թէ յառաջն քանի ունէր։

Հայութին Ի.

Ներսէ հի կամարականի Շիրակաց եւ Արշարունեաց տեսան բուն կանգնէր առ սասրավ լերինն՝ սրում Արտին կոչեն, և ի գիշերի միում մը տին երամակք ցոռոց բազումք, եւ ոչ լիեւալ ատակ սրարդացն, ընթաց եալք պատմեցին ամենայն ի գեւաղն թալին: Եւ նորա իւրամի եկեալ հանգերձ եղբայրաւքն և աղատաւքն, և մտեալ կոսորէին զերէսն, և եղեն կալեալք ի թակարդի հասարակ երէոցն: Եւ եղեն սպանեալքն նետիւ չորս մասն, և զմատաղերէն ողջ կալան, որ եղեւ երկոտասան մասն. և եղեն մեռեալքն ի նիղակէ երեքհարիւր վաճառւն երէ: Արդ, գիտեաթէ ընդ ամենայն քանի լիեւալ էին:

Հայութին ԻԱ.

Ներսէ հ կամարական որդի Արշաւրի, անուանակից և նախնի այսմ Ներսէ հի, ի յաղթել պատերազմացն Բահզացն, առնու գերի սաստիկ յոյժ. և հասեալ ի դուռն արքունի, ընծայեցուցանէ թագաւորին Պարսից զհասարակ գերւոյն: Եւ թու եալ զհասարակն եւս ընծայէ որդւոյ արքայի զեւթն մասն: Եւ հրաժարեալ ի նոցանէ՝ դառնայ յաշխարհն իւր. և եկեալ ի տուն Վարդիկպետի, յոյժ մեծարի ի նմանէ, ոչ որպէս ըզ նախարար, ոյլ որպէս զմի ոք ի թագաւորաց. և սա տայ նմա զութ մասն գերւոյն: Եւ եկեալ առ սպայապեան, զօր և խորավարն կոչեն, և առաւել եւս ի նմանէ մայնեալ տայ նմա շժդի մասն գերւոյն: Եւ եւս յառաջ եկեալ հասանէ յաշխարհ իւր, և ընդ առաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր Հրահատ, և տայ նմա շժդի մասն գերւոյն: Եւ եւս յառաջ եկեալ ընդ առաջ լինին նմա ա-

զատքն Հայոց, և տայ նոցա զինն մասն գերւոյն: Եւ եկեալ ի Վաղրշապատ տայ ի սուրբ եկեղեցինն շժամ մասն գերւոյ: Եւ եկեալ Ուսհակ աւագ եղբայր իւր, տայ նմա զբսան մասն գերւոյն, և իւր մնաց հինգհարիւր յիսուն անձն: Արդ, գիտեաթէ ընդ ամենայն քանի է լիեւալ:

Հայութին ԻԲ.

Փարաւոն արքոյ եգիպտացւոց պատուէր զօր ծննդեան իւրոյ. եւ սովորութի էր նորա յաւուրն յայնմ տալ տասն նախարարացն ըստ տասնեկի պատուոյն հարիւր կարաս զինի խնկովք կազմեալ: Արդ, բաժանեած չիր զայդ ըստ պատուոցն հարիւր տասնեկին:

Հայութին ԻԳ.

Ծտեմարան մի էր իմ, յորում կայր գարի կայթ երկերիւր. մկներ մաֆն և զամենայն գարին կերան: Ես մուկն մի կալայ ի նոցանէ, և պատու հասեցի. նա խոստովանեաց և ասէ, յիս ութուուն հատ եհաս: Արդ, գիտեաթէ ընդ ամենայն քանի հատ լեալ էր յշտեմարանին, և կամ քանի մկունք որք կերանն:

Հայութին ԻԴ.

Երեք աւաղանք էին ի քաղաքին Աթենացւոց միաշափիք, և երեք ագուգայք կային յաւազանն: Ո՞ի ագուգայն, քանզի յօրդէր, ի ժամ մի ըսցը զաւազանն. երկրորդն՝ նուազ քան զնա, յերկուս ժամս ըսցը. երեքն՝ առաւել նուազ, յերեք ժամս ըսցը: Արդ, գիտեաթէ մինչ ի միասին խառնին ագուգայքն, ի քանի երորդ մասն ժամու ըսուն զաւազանն(1):

Վէրջ:

(1) Ասոնց ըւծումը եկող թուով:

Ճ. ԸՄԵՐՆԵԿԵԴԻՌԵԿԵՆՔ

Նախորդ ամսոյս 19 ին ցաւալի դէպք մի պատահեցաւ : Երուսաղէմի բերդէն դուրս Հրէի մը նոր շենել տուած տանը մէջ սառնիճ մի բացած ըլլալով, և դեռ կամարը լաւ չհաստատուած՝ տակի կաղպարը քակելով, և գմբաղդաբար նոյն առտուն յորդ անձրեւ գալուլ յանկարծ կամարը կը փլչի և երեք հոգի տակը կը մնան, որոնց մէկը հազիւ իւր շունչը վրան դուրս կը հանուի, իսկ երկուքը հոն իրենց մահը կը դժնեն :

— Հետագայ օրը Հրեայ մի, անշուշոյուսահատութենէ մղեալինք զինքը իւր տանը մէջ կը կախէ :

— Նոյն օրերը ձկնալվաճառի մը խանութին դիմաց խուռն բաղմութիւն դիզուած ժամանակ, անկանոն զինուորի մը մէջքի ատրճանակը սիկարայի կայծէ յանկարծ կրակ առնելով կը նետուի, ու քովը կայնող յոյնի մը ազդը կը վիրաւորէ, որ բարեբաղդաբար անվնաս ըլլալով հեւանդանոց կը փոխադրեն զինքը :

— Անցեալ շաբթու մունետիկի միջոցաւ իմաց տրուեցաւ հասարակութեան, որ ստակները իրենց բընական արժողութեամբը գործածուին, և հետեւապէս օսմանեան լիրան՝ որ մինչեւ 112 դուրսուշի կ'երթար, 100 ի իջաւ :

— Քաղաքս միշտ հանդարտութեան մէջ է, առողջական վիճակը երթալով կը լաւանայ շնորհիւ յորդ և շահաւոր անձրեւներուն :

— Անցեալ շաբթու Ապանից հիւսկատոս մեծապատիւ Պ. Տոտիչին, որ քանի մը ամսէ ի վեր իւր հայրենիքը բացած էր, ողջամբ վերադարձաւ

ի սուրբ քաղաքս, Ոստերս կը սպասուի նաեւ Ըստորից մեծապատիւ հիւսկատոս Պ. Ա. ալքէր տը Մոլդիկմը :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋՔ

Կորանոր կանոնագրութիւնք հակառակ ոգւց և բարուց մողովը դաստիան, առաւել վեասակաբք են քան օդտակաբք :

Օրէնք ճշմարիտ՝ է նոյն ինքն գիտակցութիւն անձնիւր ուրուք :

Երդումն յաւելեալ յօրէնս՝ յուշանէ նոյն իսկ զանիրաւութիւն օրինին :

Ազնուական հովմայեցիին մէկը, որ մտերիմ բարեկամ էր Յուլիոս Բ. Պապին, լսաց օր մի իրեն, թէ “Ըատ մարդիկ կը գանդատին քենէթէ Պաղլիացւոց դէմեղած պատերազմին մէջ խիստ մեծ եռանդ կը ցուցընես : Աստուած քեզ եկեղեցւոց բանալիքը տուածէ, կ'ըսեն, որ խլուսովութեան դուռը փակես ու հաշտութեան դուռը բանաս” : — Պատասխանեց Պապը : “Անոնք որ սցովէս կը խօսին, սուրբ Պետրոսէն և Պողոսէն աւելի զօրաւոր չեն, որոնք եկեղեցւոյ իշխաններն էին . իմ նախնիքներս սուրբ Պետրոսի բանալիքին ծառայեցին ու հետեւեցան, իսկ ես սուրբ Պետրոսի սուրբ կ'ուղեմ բանեցընել” : — Ասաց ազնուատիկանը . “Պիտէ ձեր սրբութիւնը որ Պրիտոս Պետրոսին ասաց որ սուրբ իւր պատեանը դարձընէ” : — “Ճշմարիտէ, կրկնեց Յուլիոս, բայց յիշէ որ Պրիտոսս Մաղքոսի ականջը կտրելէն առաջ ըստաց այն խօսքը, այլ քաջութիւնը ընելէն յետոյ” :